



Կալիֆոռնիայի Պաշտպանության և փաստաբանության համակարգ
www.disabilityrightsca.org

Անվճար հեռախոսահամար՝ 1-800-776-5746

Սեպտեմբեր 2018 թ., հրատ. # 5110.10

Ձեռնարկ

հոգեկան առողջության բարդ խնամատարությունների մասին

«Համագործակցություն հաշմանդամություն ունեցող անձանց հետ՝ նպատակ ունենալով պաշտպանել նրանց, նրանց շահերը և նրանց մարդկային, իրավաբանական և սպասարկմանն առնչվող իրավունքները, ձգտելով կառուցել հասարակություն, որը արժևորում է բոլոր մարդկանց և աջակցում է նրանց արժանապատվություն, ազատություն, ընտրություն և որակյալ կենսամակարդակ ունենալու իրավունքները»:

Բովանդակություն

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՈՐՈՆՔ ԿԱՐՈՂ ԵՔ ԱՌԱՋ ՔԱՇԵԼ.....	1
A) Խնամատարության վերաբերյալ վերալսում	1
B) Ազատագրկման օրիանականության ստուգում	1
C) Նշանակման վերաբերյալ վերստուգիչ լսում	1
D) Առանձնահատուկ իրավունքներ	1
II. ԶԱՃԱԽԱԿԻ ՏՐՎՈՂ ԶԱՐՑԵՐ ԶՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԲԱՐԴ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՎ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՏՈՒԳՄԱՆ ՄԱՍԻՆ.....	2
A) Ո՞րն է խնամատարության իրավական չափորոշիչը:	2
B) Ես մեկուսացված հաստատությունում եմ: Ինձ մշտական խնամատարություն է նշանակվել երկու շաբաթ առաջ: Ինչպե՞ս կարող եմ դադարեցնել խնամատարությունն իմ նկատմամբ:	2
C) Ինձ մշտական (Murphy) խնամատարություն է նշանակվել: Ի՞նչը պետք է այլ կերպ անեմ, որպեսզի իմ նկատմամբ խնամատարությունը դադարեցվի:.....	4
D) Ես չեմ հիշում, թե ով էր իմ շահերը ներկայացնում խնամատարության լսման ժամանակ: Ինչպե՞ս կարող եմ իրավաբան ունենալու հնարավորություն ստանալ, որն ինձ կներկայացնի վերալսման ժամանակ:	4
E) Ինձ տրամադրել են իմ հանրային պաշտպանի հեռախոսահամարը, որի հետ դժվարանում եմ կապ հաստատել: Ի՞նչ պետք է անեմ:.....	4

- F) Ես չհաջողեցի իմ խնամատարության մասին վերալսումը: Ե՞րբ կարող եմ այս հարցի վերաբերյալ մեկ այլ լսում ունենալ: 5
- G) Ես չհաջողեցի վերալսման ժամանակ և դեռ կարծում եմ, որ ինձ չի նշանակվի խնամատար, քանի որ չեմ համարում, որ «ծանր հաշմանդամություն ունեմ»: Ի՞նչ կարող եմ անել: 5
- H) Ազատագրկման օրինականության ստուգման մասին իմ միջնորդությունն ուղարկել եմ շուրջ երկու շաբաթ առաջ ու դեռ չեմ ստացել որևէ նորություն: Արդյո՞ք կա որևէ վերջնաժամկետ, որի շրջանակում դատարանը պետք է պատասխան ուղարկի: 6
- I) Ես խնամատարության տակ եմ եղել շուրջ մեկ տարի: Եվ չեմ կարծում, որ ևս մեկ տարի դրա կարիքն ունեմ: Ի՞նչ պետք է անեմ: 6
- J) Ես չեմ ցանկանում պայքարել ինքնին խնամատարության հանդեպ, սակայն կարիք չունեմ գտնվելու մեկուսացված հաստատությունում: Կարծում եմ, որ պատրաստ եմ ապրել կամ տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի հաստատությունում կամ էլ մեկ այլ մեկուսացված վայրում: Ի՞նչ կարող եմ անել: 7
- K) Իմ խնամատարը հանրային խնամակալ է, որի ոչ անունը գիտեմ, ոչ էլ գիտեմ, թե ինչպես կարելի է կապվել նրա հետ: 7
- L) Ես պատրաստ եմ տեղափոխվել մեկ այլ մեկուսացված հաստատություն, սակայն իմ հանրային խնամակալը երբեք ինձ հետզանգ չի կատարում և նրա հետ չեմ կարողանում կապ հաստատել: Արդյո՞ք կա որևէ այլ բան, որ կարող եմ անել: 7
- M) Ես չկարողացա դատավորից ստանալ ավելի քիչ սահմանափակող հաստատություն նշանակելու հնարավորություն: Արդյո՞ք կարող եմ դատարանին կրկին միջնորդություն ներկայացնել: 8
- N) Ես մեկուսացված հաստատությունում եմ, որտեղ իմ իրավունքները ոտնահարվում են. ինձ չի թույլատրվում հեռախոսազանգեր կատարել կամ այցելուներ ունենալ, և

անձնակազմն ինձ թույլ չի տալիս զրույցներ ունենալ: Ի՞նչ կարող եմ անել: 8

III. ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ ԵՎ ԻՆՉՊԵՍ ՊԱՏՐԱՍԵԼ ՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՏՈՒԳՄԱՆ ՄԱՍԻՆ.....	10
A) Ընդհանուր ցուցումներ	11
B) Միջնորդության ձևաթղթի լրացման ցուցումներ	11
C) Համարակալված հարցեր/հայտարարություններ.....	12
D) Ստուգում և ստորագրություն	14
E) Միջնորդության ներկայացում	15
F) Այս փաթեթի լրացուցիչ տեղեկությունները	15
IV. ԻՆՉՊԵՍ ԱՏԱՆԱԼ ՎԵՐԱԼՍՈՒՄ ՁԵՐ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....	16
V. ԻՆՉՊԵՍ ԲՈՂՈՔԱՐԿԵԼ, ԵՐԲ ՁԵԶ ՆՇԱՆԱԿՈՒՄ ԵՆ LPS ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ	18
VI. ԻՆՉՊԵՍ ՎԻՃԱՐԿԵԼ ՁԵՐ ԱՅԴ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ, ԵՐԲ ԴՈՒՔ ԵՎ ՁԵՐ ԽՆԱՄԱՏԱՐԸ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅԱՆ ԶԵՔ ԳԱԼԻՍ.....	19
Ա) Նշանակման վերանայման մասին լսում.....	19
Բ) Նշանակման վերանայման համար միջնորդություն ներկայացնելու ցուցումներ.....	20
VII. ԻՆՉՊԵՍ ԳՐԵԼ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ	21
[Լմուշ] Էզրա Փառլնդի հայտարարագիրը	23

VIII. ՈՐՔԱՆ ՀԱՃԱԽ ԿԱՐԵԼԻ Է ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ	24
IX. ԻՆՉՊԵՍ ՎԻՃԱՐԿԵԼ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԿՈՐՈՒՄՏԸ	24
Ա) Առանձնահատուկ իրավունքների կորստի վիճարկումը՝ որպես հոգեկան առողջության խնամատարության պայման	24
Բ) Միջնորդություն ներկայացնելու ցուցումներ՝ վիճարկելու խնամառուի մերժված իրավունքների առնչությամբ.....	25
ԿԻՑ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ Ա. Վերալսման հարցում.....	26
ԿԻՑ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ Բ. Ազատագրկման օրինականության ստուգում ..	28
ԿԻՑ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ Գ. Նշանակման վերանայման հարցում	30
ԿԻՑ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ Դ. Բողոքարկման ծանուցում	32
ԿԻՑ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ Ե. Խնամառուի՝ դատարանին ներկայացվող նամակի նշում, որը վերաբերում է այդ նշանակման վերականգնման վիճարկման մասին մտադրությանը	34
ԿԻՑ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ Չ. Գործողությունների պլան, որը ցույց է տալիս, որ ես ծանր հաշմանդամություն ունեցող անձ չեմ	38
ԿԻՑ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ Է. Կալիֆոռնիայի Գերագույն դատարանների ցանկ.....	41

Եթե այս ձեռնարկում տրամադրված որևէ տեղեկատվության հետ կապված հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել Disability Rights California-ին 1-800-776-5746 հեռախոսահամարով: LPS խնամատարությունների մասին տեղեկությունների համար, կարող եք խնդրել Disability Rights California-ի # 5608.01 հրատարակությունը: Կարող եք նաև ներբեռնել այս հրապարակումը, [սեղմել հրատարակության համար](#) և հոգեկան առողջությանն առնչվող այլ տեղեկություններ մեր կայքէջից [սեղմել այստեղ DRC-ի կայքէջի](#) այս հատվածում.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՈՐՈՆՔ ԿԱՐՈՂ ԵՔ ԱՌԱՋ ՔԱՇԵԼ

Այս ձեռնարկը կօգնի մշտական (մեկ տարի ձգվող) ինամատարության տակ գտնվող անձանց: Այս ձեռնարկում ուսումնասիրվող տարբեր դատական վիճարկումները հետևյալն են.

A) Ինամատարության մասին վերայսում,

Ինամատարության մեջ գտնվելու անհրաժեշտության վիճարկում:

*Դուք պետք է փորձեք վիճարկել ինամատարությունը վերալսման միջոցով, նախքան ազատագրկման օրինականության ստուգման մասին գրություն ներկայացնելը:

(Տե՛ս կից փաստաթուղթ Ա-ն.)

B) Ազատագրկման օրինականության ստուգումները

Կարելի է վիճարկել՝

- 1) ինամատարության տակ գտնվելու ժամանակ,
- 2) ինամատարության ազատագրկման եզրակացության մասին պայմանները, այդ թվում հիվանդների իրավունքների ժխտումը: (Տե՛ս կից փաստաթուղթ Բ-ն.)

C) Նշանակման վերանայման լսում

Ձեր նշանակումը վիճարկելու համար, եթե կարծում եք, որ Ձեզ կարող է սահմանվել ավելի քիչ սահմանափակող նշանակում: (Տե՛ս կից փաստաթուղթ Գ-ն.)

D) Առանձնահատուկ իրավունքներ

Վիճարկել քվեարկելու կամ վարորդական թույլտվություն ունենալու իրավունքի կորուստը՝ որպես LPS ինամատարության պայման:

II. ՀԱՃԱԽԱԿԻ ՏՐԿՈՂ ՀԱՐՅԵՐ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԲԱՐԴ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՎ ԱՉԱՏԱԶՐԿՄԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՄԱՍԻՆ

A) Ո՞րն է խնամատարության իրավական չափորոշիչը:

Իրավական չափորոշիչը «ծանր հաշմանդամություն» ունենալն է: Ծանր հաշմանդամության երկու սահմանում կա: Ծանր հաշմանդամությունը կարող է նշանակել, որ ի վիճակի չէք ապահովել Ձեզ սննդով, հագուստով և կացարանով հոգեկան խանգարման պատճառով: Կալիֆոռնիայի բարեկեցության և հաստատությունների մասին օրենսգրքի § 5008(ը) (1(Ա) բաժին:

Ծանր հաշմանդամությունը կարող է նաև նշանակել, որ անձը հոգեկան անհավասարակշիռ իրավիճակում է եղել՝ համաձայն Կալիֆոռնիայի քրեական օրենսգրքի 1370-րդ բաժնի և բոլոր հետևյալ փաստերի առկայության դեպքում.

- (i) Մեղադրական եզրակացությունը կամ անձի հանդեպ ուղղված առկախ տեղեկատվությունը պարտավորությունների ստանձման ժամանակ. քրեական հանցագործություն, որը ներառում է իր մեջ մահ, ծանր մարմնական վնասվածք կամ լուրջ սպառնալիք մեկ այլ անձի ֆիզիկական բարօրությանը:
- (ii) Մեղադրական եզրակացությունը կամ այդ մասին տեղեկատվությունը չի մերժվել:
- (iii) Որպես հոգեկան առողջության խանգարման արդյունք՝ անձն ի վիճակի չէ հասկանալ իր հանդեպ առաջ քաշված վարույթի եղությունը և նպատակը և նպատակահարմար եղանակով աջակցել փաստաբանին իր պաշտպանության իրականացման հարցում:
- (iv) Անձը ֆիզիկական վնասի էական վտանգ է ներկայացնում այլ անձանց հոգեկան հիվանդության, խնդրի կամ խանգարման պատճառով:

Կալիֆոռնիայի բարեկեցության և հաստատությունների մասին օրենսգրքի § 5008(ը)(1)(Բ) բաժին: Այս բաժնում խնամատարությունը երբեմն անվանում են «Մըրֆի» խնամատարություն:

B) Ես մեկուսացված հաստատությունում եմ: Ինձ մշտական խնամատարություն է նշանակվել երկու շաբաթ առաջ:

Ինչպե՞ս կարող եմ դադարեցնել ինամատարությունն իմ նկատմամբ:

Դուք կարող եք *վերալսման միջնորդություն ներկայացնել* (խնդրել) դատարան՝ պարզելու, թե արդյոք Դուք պետք է ինամատարության ներքո լինեք: Եթե դիմեք, Դուք վերալսման իրավունք կունենաք առ այն, թե արդյոք Դուք առհասարակ պետք է ինամատարության ներքո լինեք: Լսման համար առաջին միջնորդությունը ներկայացնելուց հետո վերալսման որևէ հետագա միջնորդություն չի կարող ներկայացվել վեց ամսվա ընթացքում:

Կալիֆոռնիայի բարեկեցության և հաստատությունների մասին օրենսգրքի § 5364 բաժին:

Վերալսմանը Դուք երդվյալ ատենակալների դատավարության իրավունք չունեք: *Բարբերն ընդդեմ Գերագույն դատարանի*, 113 Կալիֆոռնիայի վճռաբեկ դատարանների որոշումների հավաքածուի 3^{-րդ} 955, 960 (4^{-րդ} Թաղամասերի վճռաբեկ դատարան 1980): Վերալսման ժամանակ Դուք մեծ բեռ ունեք՝ ապացուցելու, որ «ծանր հաշմանդամություն ունեցող անձ չեք»: *Id.* և 965:

Ձեր վերալսման ժամանակ, Դուք պետք է պատրաստ լինեք ասելու դատավորին պատճառները, թե ինչու «ծանր հաշմանդամություն ունեցող անձ չեք»: Դատավորին ցույց տալու համար, որ Դուք «ծանր հաշմանդամություն ունեցող անձ չեք», մշակեք մանրակրկիտ պլան, թե ինչպես եք ապահովելու Ձեզ սննդով, հագուստով և կացարանով կամ թե ինչու եք Ձեզ իրավագոր համարում այդ գործողությունների համար: Որքան շատ մանրամասներ տրամադրեք, այնքան ավելի լավ: Հասցեագրեք՝ նշելով «ու՛մ», «ի՛նչ», «որտե՛ղ», «երբ» և «ի՛նչպես»: Տե՛ս գործողությունների պլանի ձևանմուշը, որը հաստատում է, որ ես «ծանր հաշմանդամություն» չունեմ: (Տե՛ս կից փաստաթուղթ 2-ն):

Եթե կա որևէ մեկը, ով կարող է տրամադրել Ձեզ սնունդ, հագուստ կամ կացարան, խնդրեք, որ այդ անձը գրի այդ մասին ինամատարին, դատավորին և փաստաբանին իրենց պատրաստակամության մասին: Սա կոչվում է «երրորդ կողմի աջակցություն» և կարող է օգտագործվել վիճարկելու ինամատարությունը: Դուք պետք է պատրաստված լինեք պատմելու Ձեր դատավորին, թե ինչ տեսակի հոգեկան առողջության և/կամ բժշկական բուժում եք ստանալու և որտեղ եք դիմելու այն ստանալու համար:

Եթե Դուք ծրագրում եք ստանալ սոցիալական ապահովության կամ այլ նպաստներ, ապա պետք է բացատրեք դատավորին, որ գիտեք, թե ինչպես կարելի է գրանցվել և ստանալ այդ նպաստները:

Վերալսում պահանջելու ամենահեշտ տարբերակը փաստաբանի հետ կապ հաստատելն է, ով Ձեր շահերն էր ներկայացնում ինամատարության նշանակման ժամանակ: Փաստաբանին տեղեկացրեք, որ Դուք ցանկանում եք դատարանին միջնորդագիր ներկայացնել վերալսման համար: (Տե՛ս կից փաստաթուղթ Ա-ն):

C) Ես մշտական ինամատարության տակ եմ գտնվում: Ի՞նչը պետք է այլ կերպ անեմ, որպեսզի իմ նկատմամբ ինամատարությունը դադարեցվի:

Եթե Դուք մշտական ինամատարության տակ եք գտնվում, կարևոր է, որ ցույց տաք, որ Ձեզնից վտանգ չեք ներկայացնի, եթե դուրս գաք այդ ինամատարության շրջանակներից: Եթե անցյալում խախտման որևէ միջադեպ է եղել, պատրաստ եղե՛ք ցույց տալու՝ ինչքանով եք փոխվել:

Կարծիք տրամադրելու համար Ձեզ անհրաժեշտ կլինի նաև հոգեկան առողջության մասնագետ կամ փորձագետ: Այս անձը կարող է ասել, արդյոք կարծում է, որ կարող եք անվտանգ ապրել համայնքում: Նրանք կարող են նաև քննարկել, թե արդյոք ոչ իրավագոր էք:

D) Ձեմ հիշում, թե ով էր ինձ ներկայացնում ինամատարության լսման ժամանակ: Ինչպե՞ս կարող եմ իրավաբան ունենալու հնարավորություն ստանալ, որն ինձ կներկայացնի վերալսման ժամանակ:

Եթե Դուք չեիք վճարել փաստաբանի՝ ներկայացնելու Ձեր շահերը ինամատարության լսման ժամանակ, հավանաբար Ձեր շահերը ներկայացնում էր դատարանի կողմից նշանակված փաստաբանը: Դատարանի կողմից նշանակված շատ փաստաբաններ Հանրային պաշտպանի գրասենյակից են: Կարող եք գտնել հեռախոսահամարը տեղական հեռախոսագրքում «վարչաշրջանի իշխանության» բաժնի ներքո: Կարող եք խնդրել Ձեր հիվանդների իրավունքների պաշտպանին, որպեսզի օգնի Ձեզ կապվել Ձեր հանրային պաշտպանի հետ:

E) Ինձ տրամադրել են իմ հանրային պաշտպանի հեռախոսահամարը, ում հետ դժվարանում եմ կապ հաստատել: Ի՞նչ պետք է անեմ:

Երբ Դուք զանգահարում եք հանրային պաշտպանի գրասենյակ, ապա պետք է զանգին պատասխանողից հարցնել, թե երբ է Ձեր փաստաբանի հետ կապ հաստատելու ամենահարմար ժամը: Շատ հանրային պաշտպաններ օրվա մեծ մասը լինում են դատարանում՝ իրենց գրասենյակում լինելու փոխարեն: Կարող

Եք նաև խնդրել ձայնային հաղորդագրություն թողնել Ձեր փաստաբանի համար: Երբ հաղորդագրություն եք թողնում, վստահ եղեք, որ տրամադրել եք Ձեր անունը, ծննդյան ամսաթիվը, Ձեզ զանգահարելու ամենահարմար ժամը և թե ինչու էիք զանգահարել: Հավաստիացեք, որ գրի եք առել փաստաբանի համար արված Ձեր հաղորդագրությունը Ձեր անձնական գրառումների համար: Գրեք Ձեր փաստաբանին, եթե շփման խնդիրներ եք ունենում և պահեք այդ նամակի(ների) պատճենները՝ որպես հեռախոսազանգի կամ հաղորդագրության ընթացքի հետևման միջոց: Դուք կարող եք նաև խոսել Ձեր փաստաբանի ղեկավարի հետ:

F) Ես չհաջողեցի իմ խնամատարության վերայսումը: Ե՞րբ կարող եմ այս հարցի վերաբերյալ մեկ այլ լսում ունենալ:

Վերայսման համար առաջին միջնորդությունը ներկայացնելուց հետո պետք է սպասեք վեց ամիս, նախքան մեկ այլ միջնորդություն ներկայացնելը: Կալիֆոռնիայի բարեկեցության և հաստատությունների մասին օրենսգրքի § 5364 բաժին: Կարող եք նաև սպասել մինչև այս խնամատարությունն ավարտվի: Մշտական խնամատարությունը լավ է միայն մեկ տարվա համար, նախքան Ձեր խնամատարը ստիպված կլինի դատարան գնալ:

G) Ես չհաջողեցի վերայսումը և դեռ կարծում եմ, որ ինձ խնամատարություն պետք չէ, որովհետև չեմ կարծում, որ «ծանր հաշմանդամություն ունեցող անձ» եմ: Ի՞նչ կարող եմ անել:

Կարող եք միջնորդություն ներկայացնել ազատագրկման օրինականության ստուգման նպատակով: Ազատագրկման օրինականության ստուգման նպատակով ներկայացված միջնորդությունը մի միջոց է, որով կարելի է խնդրել դատարանին, որոշելու՝ արդյոք Ձեր ազատագրկումն իրավաչափ է: Ազատագրկման օրինականության ստուգման միջնորդագիրը պետք է ներկայացվի Ձեր նշանակումը կատարող վարչաշրջանի գերագույն դատարանին կամ այն վարչաշրջանին, որտեղ խնամատարության դեպքը քննվել և որոշում է կայացվել: Կարող եք ներկայացնել միջնորդագիրը տվյալ դեպքը քննող և որոշումը կայացնող դատարանին, քանի որ խնամատարություն նշանակող դատավորն այդ կերպ կարող է ավելի լավ հիշել Ձեր դեպքը: Այս նյութի հետևամասում Գերագույն դատարանների ցանկն է: (Տես կից փաստաթուղթ Է-ն):

*Պետք է փորձեք վիճարկել խնամատարությունը վերայսման գործընթացի միջոցով, նախքան ազատագրկման օրինականության ստուգման միջնորդություն ներկայացնելը:

H) Ազատագրկման օրինականության ստուգման մասին իմ միջնորդությունն ուղարկել եմ շուրջ երկու շաբաթ առաջ ու դեռ չեմ ստացել որևէ նորություն: Արդյո՞ք կա որևէ վերջնաժամկետ, որի շրջանակում դատարանը պետք է պատասխան ուղարկի:

Եթե Ձեր ազատագրկման օրինականության ստուգման միջնորդությունը Ձեր ծանր հաշմանդամություն ունենալու վերաբերյալ է, ապա միջնորդագիրը ներկայացնելուց կամ մյուս վարչաշրջանից այն ստանալուց հետո 30 օրվա ընթացքում դատարանն այդ միջնորդության առնչությամբ կարող է անել երեք գործողություն.

- 1) «Բավարարել միջնորդությունը», որը նշանակում է, որ Դուք շահում եք Ձեր բողոքը,^{***}
- 2) Տրամադրել «կարգադրագիր պատճառը հիմնավորելու համար», որը նշանակում է, որ դատարանը ցանկանում է լսել մյուս կողմին՝ հասկանալու, թե ինչու հայցվող պահանջը չպետք է տրամադրվի: Մյուս կողմը (սովորաբար վարչաշրջանի փաստաբանը) պետք է «հետադարձ պատասխան ուղարկի»՝ հիմնավորելու «կարգադրագրի պատճառը»: Երբ իրավունք ունեք ներկայացնելու «տվյալ հետադարձ պատասխանի ժխտումը»: Որևէ ժխտում ներկայացնելուց հետո 30 օրվա ընթացքում (կամ ժխտում ներկայացնելու ժամկետի ավարտից հետո) դատարանը կամ կտրամադրի, կամ կմերժի ազատության տրամադրումը կամ կկարգադրի ապացույցների վրա հիմնված մեկ այլ լսում:
- 3) Մերժել ազատության տրամադրման միջնորդությունը:

Եթե դատարանը վճռում է մերժել Ձեր միջնորդությունը, այն պետք է գրավոր պարզաբանի, թե ինչու է մերժում Ձեր միջնորդությունը:

I) Ես խնամատարության տակ եմ եղել շուրջ մեկ տարի: Եվ չեմ կարծում, որ ևս մեկ տարի դրա կարիքն ունեմ: Ի՞նչ պետք է անեմ:

Եթե դա դեռ չեք արել, կարող եք պահանջել վերալսում կամ ազատագրկման օրինականության ստուգման միջնորդագիր ներկայացնել: **Չիշեք, որ պետք է փորձեք վերալսում ներկայացնել, նախքան ազատագրկման օրինականության ստուգման միջնորդագիր ներկայացնելը:** Եթե արդեն մեկ տարի է, ինչ խնամատարության ներքո եք գտնվում, կարող եք սպասել և տեսնել, արդյոք Ձեր խնամատարը կփորձի թարմացնել Ձեր

խնամատարությունը: Խնամատարը պետք է Ձեզ տեղյակ պահի, արդյոք պլանավորում է թարմացնել Ձեր խնամատարությունը:
Խնամատարությունները միայն մեկ տարի ժամկետով են: Ամեն տարի խնամատարը պետք է դիմի Ձեր խնամատարության թարմացման համար: Սա կոչվում է «վերականգնման լսում»: Եթե Ձեր խնամատարը խնամատարության վերականգնում կպահանջի, ապա կարող եք առարկել (պայքարել) այն վերականգնելու դեմ: Լավ գաղափար է պնդել, որ ցանկանում եք դատարան գնալ: Ու կրկին պատրաստ եղեք պատմելու դատավորին, թե ինչպես եք ապահովելու Ձեզ սննդով, հագուստով և կացարանով: Այն կարող եք նամակի տեսքով ուղարկել դատարանին: Տե՛ս կից փաստաթուղթ Ե-ն:

J) Ես չեմ ցանկանում պայքարել ինքնին խնամատարության դեմ, սակայն կարիք չունեմ գտնվելու մեկուսացված հաստատությունում: Կարծում եմ, որ պատրաստ եմ ապրել կամ տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի հաստատությունում կամ էլ մեկ այլ մեկուսացված վայրում: Ի՞նչ կարող եմ անել:

Պատմեք Ձեր խնամատարին, որ կցանկանայիք խնամատարության նշանակման փոփոխություն և նշեք, թե ինչու: Պատմեք խնամատարին, թե որքան լավ եք դրսևորել Ձեզ տվյալ հաստատությունում: Եթե անձնակազմի կողմից դրական գեկույցներ կան, պատմեք այդ մասին խնամատարին: Ձեր խնամատարը կարող է աշխատել Ձեր սոցիալական աշխատողի և բուժող թիմի հետ՝ ստեղծելու պլան, որով կարելի է Ձեզ համայնք վերադարձնել:

Ձեր խնամատարը կարող է Ձեզ տեղակայել ավելի քիչ սահմանափակող հաստատությունում՝ առանց դատարանի թույլտվության, եթե արդեն դրա ներքո չեք, քանի որ դատավարության համար իրավագոր չեք ճանաչվել:

K) Իմ խնամատարը հանրային խնամակալ է, որի ոչ անունը գիտեմ, ոչ էլ գիտեմ թե ինչպես կարելի է կապվել նրա հետ:

Փորձեք այն փնտրել հեռախոսագրքի «հանրային խնամակալ» բաժնում: Չաճախ այն նշված է պետական իշխանությունների կայքէջերում: Ձեր սոցիալական աշխատողից կարող եք ինդրել Ձեր հանրային խնամակալի անունը և հեռախոսահամարը: Կարող եք դիմել նաև Ձեր փաստաբանին՝ օգնելու Ձեզ նշանակել հանրային խնամակալ: Չանգահարեք վարչաշրջանի հիվանդների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող փաստաբաններին՝ իմանալու անունը և հեռախոսահամարը:

L) Ես պատրաստ եմ տեղափոխվել մեկ այլ չմեկուսացված հաստատություն, սակայն իմ հանրային խնամակալը երբեք

ինձ հետզանգ չի կատարում և նրա հետ չեմ կարողանում կապ հաստատել: Արդյո՞ք կա որևէ այլ բան, որ կարող եմ անել:

Կարող եք միջնորդություն ներկայացնել (խնդրել) դատարան՝ պահանջելով «խնամատարության նշանակման վերանայման լսում»: Կալիֆոռնիայի բարեկեցության և հաստատությունների մասին օրենսգրքի § 5358.3 բաժին: Կրկին խնամատարության նշանակման վերանայման լսման լավագույն տարբերակը Ձեր փաստաբանին խնդրելն է դատարանից հարմար օր վերցնել Ձեր դեպքի համար:

M) Ես չկարողացա դատավորին համոզել՝ նշանակելու ինձ համար ավելի քիչ սահմանափակող հաստատություն: Արդյո՞ք կարող եմ դատարանին կրկին միջնորդություն ներկայացնել:

Եթե դուք ձախողում եք ավելի քիչ սահմանափակող հաստատությունում նշանակվելու լսումը, ապա պետք է սպասեք ևս վեց ամիս մեկ այլ միջնորդություն ներկայացնելու համար (մեկ այլ լսում խնդրելու համար): Կալիֆոռնիայի բարեկեցության և հաստատությունների մասին օրենսգրքի § 5358.3 բաժին:

Կարող եք նաև ներկայացնել ազատագրկման օրինականության ստուգման միջնորդությունն այնտեղից, որտեղ խնամատարությունը հաստատվել էր կամ այն վարչաշրջանում, որտեղ ազատագրված եք (այն է՝ վարչաշրջանը, որտեղ գտնվում է տվյալ հաստատությունը): Կալիֆոռնիայի բարեկեցության և հաստատությունների մասին օրենսգրքի § 5358.7 բաժին:

N) Ես մեկուսացված եմ մի հաստատությունում, որտեղ իմ իրավունքները ոտնահարվում են. ինձ չի թույլատրվում հեռախոսազանգեր կատարել կամ այցելուներ ունենալ, և անձնակազմն ինձ թույլ չի տալիս գրույցներ ունենալ: Ի՞նչ կարող եմ անել:

Դուք պետք է ծանուցեք Ձեր փաստաբանին և խնդրեք նրան այդ իրավիճակի առնչությամբ դատավորի ուշադրությունը հրավիրել: Դուք պետք է նաև կապ հաստատեք Ձեր վարչաշրջանի հիվանդների իրավունքների շահերի պաշտպանությամբ զբաղվող գրասենյակի հետ և տեղեկացնեք նրանց, որ ցանկանում եք բողոք ներկայացնել: Որոշ վնասակար դեպքերի առնչությամբ բողոքը կարող է ներկայացվել թույլտվության միջոցով: Հիվանդների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող գրասենյակն ունի թույլտվությունը տրամադրող կառույցի կոնտակտային տեղեկությունները: Ինչպես նաև

թույլտվության տրամադրման անհրաժեշտ հեռախոսահամարների համար
Կալիֆոռնիայի հիվանդների իրավունքների հարցերով զբաղվող գրասենյակի
հեռախոսահամարն է՝ 916-575-1610: Կարող եք նաև ազատագրկման
օրինականության ստուգման միջնորդություն ներկայացնել ցանկացած
վարչաշրջանում: (Տե՛ս կից փաստաթուղթ Բ-ն):

III. ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ ԵՎ ԻՆՉՊԵՍ ՊԱՏՐԱՍՏԵԼ ՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Ազատագրկման օրինականության ստուգում

Օգտագործվում է այն անձանց համար, ովքեր հոգեկան առողջության մշտական խնամատարության ներքո են գտնվում,

ազատագրկման օրինականության ստուգման մասին միջնորդությունը մի եղանակ է, որը կարող էք ներկայացնել, եթե հոգեկան առողջության խնամատարության ներքո էք գտնվում և,

1. կարծում եք, որ Ձեզ անօրինականորեն են պահում ազատագրկված, կամ
2. կարծում եք, որ Ձեր իրավունքները ոտնահարվում են տվյալ հաստատությունում:

Ե՞րբ կարելի է ազատագրկման օրինականության ստուգման մասին միջնորդություն ներկայացնել:

1. Այն դեպքում, երբ կարծում եք, որ Ձեր իրավունքները ոտնահարվել են առանց հիմնավոր պատճառի,
2. Այն դեպքում, երբ կարծում եք, որ Ձեզ ազատագրկման մեջ են պահել անօրինական կերպով և այլ վերալսումների ժամանակ, այն է՝ խնամատարության վերալսումները և դրանց նշանակումները սպառվել են:

Ինչպե՞ս կարող եք հիմնավորել, որ Ձեզ անօրինական կերպով են ազատագրկել:

1. Դուք պետք է ցույց տաք, որ հոգեկան խանգարման արդյունքում ծանր հաշմանդամություն ունեցող անձ չեք:
2. Ծանր հաշմանդամություն նշանակում է, որ Դուք ի վիճակի չեք ապահովել Ձեզ սննդով, հագուստով և կացարանով:
3. Պետք է ցույց տաք մասնավորապես, թե ինչպես եք ապրելու այդ հաստատությունից դուրս:

Ինչպե՞ս կարող եք հիմնավորել, որ Ձեր իրավունքները ոտնահարվել են:

1. Պետք է նշեք, թե մասնավորապես երբ են Ձեր իրավունքները ոտնահարվել:
2. Նշեք յուրաքանչյուր ոտնահարման դեպքն առանձնաբար:

Արդյո՞ք կստանաք իրավական աջակցություն:

1. Երբ դատարանը բավարարում է միջնորդությունը, Ձեզ կնշանակվի հանրային պաշտպան նախքան լսումը:

ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԹՂԹԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

A) Ընդհանուր ցուցումներ

- 1) Կարդացեք ամբողջ ձևաթուղթը, ինչպես նաև այս ցուցումները, նախքան որևէ հարցի պատասխանելը:
- 2) Լրացրեք ձևաթուղթը հնարավորինս հստակ ձեռագրով կամ Ձեր պատասխանները տպելով: Ձևաթուղթը լրացնելիս մի շտապեք: Լավ գաղափար կարող է լինել նախ սկզբում դատարկ թղթի վրա փորձելը:
- 3) Եթե հարցերին պատասխանելու բավականաչ տեղ չունեք, ավարտեք Ձեր պատասխանը(ները) լրացուցիչ էջին(երին) և կցեք դրանք էջի հետևամասում: Միջնորդությունում գրեք, որ Ձեր պատասխանը «շարունակելի է լրացուցիչ էջի(երի)» վրա:
- 4) Կցեք որևէ փաստաթղթի պատճեններ, որոնք կարող են աջակցել Ձեր հայցին կամ որոնք անհրաժեշտ են Ձեր հայցը հասկանալու համար: Օրինակ, եթե Ձեզ ազատագրկել էին, կարող եք ներառել Ձեր ներկայացրած որևէ բողոքի պատճենները կամ Ձեր բժշկական քարտի պատճենները:
- 5) Հավաստիացեք, որ Ձեր բոլոր նշած հայտարարությունները ճշմարիտ են, որքանով Ձեզ հայտնի են:

B) Ազատագրկման օրինականության ստուգման լրացման համար անհրաժեշտ ցուցումներ

Ձեզ օգնելու համար հետևյալ հղմամբ կարող եք գտնել դատարկ միջնորդության ձևաթուղթ՝

[\[Սեղմեք այստեղ կայքէջ անցնելու համար\]](#)

Միջնորդության նմուշը նույնպես կցված է: (Տե՛ս կից փաստաթուղթ Բ-ն):

- 1) Միջնորդության ձևաթղթի վերին հատվածի վանդակները
 - Այն վանդակում, որտեղ նշված է «ՓԱՍՏԱԲԱՆ ԿԱՄ ԱՌԱՆՑ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ»՝ լրացրեք Ձեր **անունը** հետևյալ բառերով «**In Pro Per (Անձամբ)**» դրանից հետո, հաստատության անվանումը, հասցեն և **տարածաշրջանային կողով հեռախոսահամարը** , որով կարող եք զանգեր ընդունել: Օրինակ՝ եթե Դուք Մետրոպոլիտան պետական հիվանդանոցի հիվանդ եք, ապա պետք է լրացնեք այս առաջին վանդակը հետևյալ կերպ՝

(Ձեր անունը), In Pro Per
c/o Metropolitan State Hospital
11401 S. Bloomfield Ave.
Norwalk, CA 90650

- Չմոռանաք ներառել Ձեր **հեռախոսահամարը տարածաշրջանային կողմի նշմամբ** և **ծննդյան ամսաթիվը**, որտեղ նշված է:
- 2) Այն վանդակը, որտեղ նշված է «ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ, ՎԱՐՉԱՇՐՋԱՆԻ ԱՆՈՒՆԸ». գրեք **վարչաշրջանի անունը, որտեղ ներկայումս ազատագրված եք:** Օրինակ՝ Նապա պետական հիվանդանոց Նապա վարչաշրջանում:
- 3) Ստորև արտահայտության ներքևում «(ԱՆՈՒՆԻ)-Ի ԽՆԴՐՈՎ». գրեք **Ձեր ամբողջական անունը** և գրեք **In Pro Per**.
- 4) Ձեր **գործի համարը** պահանջող վանդակը դատարկ թողեք: Ձեր միջնորդությունը ներկայացնելուց հետո, դատարանը Ձեր գործին համար կնշանակի:

C) Յամարակալված հարցեր/ հայտարարություններ

- 1) Գրեք այն հիվանդանոցի անունը, որտեղ պահվում եք, եթե գիտեք, նաև Ձեր բուժող հոգեբույժի անունը:

- 2) Գրեք Ձեր հիվանդանոց ընդունվելու ամսաթիվն այս բաժնի առաջին տողի «(ամսաթիվ)» արտահայտության կողքին:
Ապա, նշեք վանդակը, որը սահմանում է Ձեր իրավական կարգավիճակը:
- 3) Եթե վիճարկում եք Ձեր ազատագրկումը.
 - (a) նշեք «a» վանդակը և այն պատճառները, որոնց համար կարծում եք, որ Ձեր ազատագրկումն անօրինական է: Անհրաժեշտության դեպքում լրացուցիչ էջեր օգտագործեք:
 - (b) Օրինակ՝ եթե Ձեզ պահում են «ծայրաստիճան հաշմանդամություն ունենալու» հիմնավորմամբ և կարծում եք, որ այժմ ի վիճակի եք ապահովելու Ձեզ սննդով, հագուստով և կացարանով, ապա գրեք, որ այժմ կարող եք ապահովել նշված միջոցներով: Ինչպես նաև տրամադրեք որևէ այլ տեղեկություն, որը կարծում եք, որ անհրաժեշտ կլինի հիմնավորելու Ձեր կարիքները, այդ թվում այլ անհատների կամ գործակալությունների աջակցությունը: Տե՛ս կից փաստաթուղթ 2-ն.
- 4) Եթե վիճարկում եք Ձեր ազատագրկման ՊԱՅՄԱՆՆԵՐԸ կամ դրա նշանակման մակարդակը.
 - (a) նշեք «b» վանդակը և հստակ նկարագրեք այն իրավունքները, որոնք մերժվում են Ձեր ազատագրկման ընթացքում և այն **ամսաթիվը(ները)**, երբ տեղի է(են) ունեցել խախտումը(ները): Դուք կարող եք վիճարկել ցանկացած իրավունքի մերժումը, որի իրավունքը Դուք ունեք՝ նահանգային կամ դաշնային օրենքի համաձայն (այդ թվում սահմանադրությունը, դատական գործերը, օրենսդրական ակտերը և վարչական կանոնակարգերը) կամ այն հաստատության քաղաքականությունների ներքո, որտեղ Դուք պահվում եք: Դրանք կարող են ներառել Ձեր իրերը պահելու և օգտագործելու իրավունքը, այցելուներ ունենալու իրավունքը, հեռախոսազանգեր կատարելու և նամակներ ստանալու իրավունքը, ոչ համապատասխանաբար կամ հավելյալ մեկուսացված չմնալու կամ սահմանափակումներ չունենալու իրավունքը, ոչ կամավոր կերպով դեղեր չընդունելու իրավունքը ոչ

հրատապ դեպքերում և այլն: Կալիֆոռնիայի Բարեկեցության & Inst. Code § 5325. Ինչպես վերը նշվեց, այն օգտակար կլինի Ձեզ համար՝ (սակայն անհրաժեշտ չէ) Ձեր միջնորդության մեջ նշելով օրենսդրական ակտի համարը, քաղաքականության համարը, գործի մեջբերումը և այլն՝ երաշխավորելով տվյալ իրավունքի(ների) իրականացումը:

- (b) Սովորաբար կարող եք միայն առարկել, եթե իրավունքները տվյալ պահին մերժվում են կամ երբ փաստեր ունեք, որ Ձեր իրավունքները կմերժվեն կանխատեսելի ապագայում (ինչպես օրինակ եթե Ձեզ ասեն, որ տեղափոխելու են ավելի շատ սահմանափակումներ ունեցող բաժանմունք/հաստատություն):
- (c) Եթե Ձեր իրավունքը մերժել են անցյալում և զգում եք, որ վտանգ կա, որ կարող են կրկին մերժել Ձեր այդ իրավունքը նմանատիպ պատճառներից ելնելով՝ կարող եք համարել այն որպես իրավունքի ոտնահարում: Օրինակ՝ եթե Ձեզ մեկուսացրել են դեղորայքի օգտագործման մերժման պատճառով, և անձնակազմը դեռ պնդում է, որ այդ անելու իրավունքն ունի, ապա կարող եք համարել այն որպես Ձեր իրավունքների ոտնահարում, որովհետև Ձեր հանդեպ կարող են կրկին սահմանափակումներ իրականացվել ապագայում՝ նույն պատճառներից ելնելով:

- 5) Նշեք վանդակները՝ **a**, **b**, **c** և **d**: Եթե ազատագրվման օրինականության ստուգման վարույթի շրջանակներում Ձեզ չեք կարող թույլ տալ փաստաբան ունենալ, «d» վանդակի կողքին կամ ներքևում պետք է գրեք «**including appointment of counsel to represent me in this action, as I cannot afford an attorney.**» (ներառյալ փաստաբանի նշանակումը՝ ներկայացնելու իմ շահերի պաշտպանությունը սույն գործողության ժամանակ, քանի որ չեմ կարող ինձ թույլ տալ վճարել փաստաբանի համար):"

D) Ստուգում և ստորագրում

Համապատասխան վանդակում նշեք տվյալ օրվա ամսաթիվը: Տպեք կամ գրեք Ձեր անունը տվյալ տողում՝ ստորին հատվածի ձախ անկյունում:

Ստորագրեք Ձեր անվան դիմաց տվյալ տողի ստորին հատվածի աջ անկյունում:

E) Միջնորդությունը լրացնելը

Ուղարկեք միջնորդագրի **բնօրինակները** և **երկու (2) պատճենը** և որևէ օժանդակ փաստաթուղթ (այդ թվում փաստաբանի նշանակման ցանկացած պահանջ) այն վարչաշրջանի Գերագույն դատարանին, որտեղ Դուք պահվում եք: Օրինակ՝ եթե Ձեզ պահում են Նապա պետական հիվանդանոցում, ապա հասցեն է՝

Napa County Superior Court
825 Brown St.
P.O. Box 880
Napa, CA 94559-0880

F) Այս փաթեթում առկա է լրացուցիչ տեղեկատվություն

Կալիֆոռնիայի Գերագույն դատարանների ցանկը ներառված է այստեղ՝ օգնելու Ձեզ դիմել Ձեր միջնորդության համար անհրաժեշտ դատարանին: (Տե՛ս կից փաստաթուղթ Է-ն.)

IV. ԻՆՉՊԵՍ ՍՏԱՆԱԼ ՎԵՐԱԼՍՈՒՄ ՁԵՐ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Եթե ցանկանում եք դադարեցնել Ձեր խնամատարությունը, ապա վերալսում ունենալու իրավունք ունեք: Կարող եք անմիջապես պահանջել վերալսում, սակայն եթե արդեն ունեցել եք այն, ապա պետք է սպասեք ևս վեց ամիս դրա հնարավորությունը կրկին ունենալու համար: Կալիֆոռնիայի բարեկեցության և հաստատությունների մասին օրենսգրքի § 5364 բաժին:

Վերալսում ստանալու լավագույն տարբերակը Ձեր փաստաբանին դիմելն է: Եթե Ձեզ նշանակել էին խնամատարություն հոգեկան առողջության առնչությամբ, ապա Ձեր շահերը ներկայացվել էր փաստաբանի կողմից: Եթե փաստաբանի ծառայություններից օգտվելու համար վճարելու հնարավորություն չէք ունեցել, ապա հավանաբար Ձեր շահերը ներկայացվել են դատարանի նշանակած փաստաբանի կողմից: Դատարանի կողմից նշանակված փաստաբաններից շատերը հանրային պաշտպաններ են:

Ձեր սոցիալական աշխատողը պետք է ունենա դատարանի կողմից նշանակված փաստաբանի անունը և հեռախոսահամարը: Կարող եք նաև զանգահարել հիվանդների իրավունքների շահերի պաշտպանությամբ զբաղվող փաստաբանին՝ պարզելու, թե ինչպես կարելի է կապվել Ձեր փաստաբանի հետ: Երբ զանգահարեք Ձեր փաստաբանին, տրամադրեք Ձեր ամբողջական անունը և ծննդյան ամսաթիվը: Եթե Ձեր փաստաբանը գրասենյակում չէ, հարցրեք, թե արդյոք կարող եք հաղորդագրություն թողնել: Համոզվեք, որ թողել եք Ձեր անունը, ծննդյան ամսաթիվը, Ձեր գտնվելու հաստատության անվանումը, Ձեր հասանելի հեռախոսահամարը, Ձեզ զանգահարելու ամենահարմար ժամը և հաղորդագրությունը, որ «Ձեր խնամատարության վերաբերյալ վերալսում եք պահանջում»: Կարող եք նաև նամակ գրել Ձեր փաստաբանին՝ նշելով այս տեղեկատվությունը:

Եթե Ձեր փաստաբանը Ձեզ հետզանգ չի կատարում, ապա կարող եք դատարանին ներկայացնել Ձեր անձնական միջնորդությունը՝ պահանջելով խնամատարության վերաբերյալ վերալսում: Դուք պետք է Ձեր փաստաբանին առնվազն երկու շաբաթ տրամադրեք, մինչև նա կփորձի կապ հաստատել Ձեզ հետ, նախքան Ձեր սեփական միջնորդությունը ներկայացնելը:

ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԼՍՄԱՆ ԿԱՄԱՐ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ԳՈՒԳՈՒՄՆԵՐ

- 1) Լրացրեք ամբողջ տեղեկատվությունը ձևաթղթում: (Տե՛ս կից փաստաթուղթ Ա-ն):

